ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄԻՆ

Հայաստանի Հանրապետություն, 0002 Երևան, Ղազար Փարպեցի, 9բ
հեռ.՝ + 374 10 53 76 62, 53 35 41, 53 00 67, հեռապատճեն՝ + 374 10 53 56 61
Էլ. փոստ՝ meo@ypc.am

ԶԼՄ-ՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄՆԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

«Հայկական երկրորդ հեռուստաալիքի»՝ 2021 թվականի նոյեմբերի 22-ի «Լրաբեր» տեսալսողական հաղորդման ընթացքում հեռարձակված՝ «Հայելի» ակումբում կայացած ասուլիսների մասին պատմող ռեպորտաժի (հեղինակ՝ Լիլիթ Կասյան) վերաբերյալ:

Դիմող՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով:

Դիտորդ մարմնի կազմը՝

Դավիթ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ
Նարինե ԱՎԵՏԻՍՅԱՆ
Ռուբեն ԲԱԲԱՅԱՆ
Շուշան ԴՈՅԴՈՅԱՆ
Կարինե ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Մեսրոպ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Արա ՂԱԶԱՐՅԱՆ
Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ
Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ
Արա ՇԻՐԻՆՅԱՆ
Նունե ՍԱՐԳՍՅԱՆ
Անժելա ՍՏԵՓԱՆՅԱՆ
Գեղամ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Ա. ՓԱՍՏԵՐ

1. 2021 թվականի դեկտեմբերի 7-ին ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինն ստացել է Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի դիմումը «Հայկական երկրորդ հեռուստաալիքի»՝2021թ. նոյեմբերի 22-ի «Լրաբեր» տեսալսողական հաղորդման ընթացքում հեռարձակված՝ «Հայելի» ակումբում կայացած ասուլիսների մասին պատմող ռեպորտաժի (հեղինակ՝ Լիլիթ Կասյան) կապակցությամբ:

Հանձնաժողովն ակնկալում է ստանալ Դիտորդ մարմնի դիրքորոշումը վերոնշյալ ռեպորտաժում ասուլիսների մասնակիցների հնչեցրած որոշ արտահայտությունները հեռարձակելու վերաբերյալ:

2. Վիճարկվող նյութը «Հայելի» ակումբում կայացած իրար հաջորդող մի քանի ասուլիսների մասին պատմող ռեպորտաժ է, որը հեռարձակվել է «Լրաբեր» լրատվական հաղորդման ընթացքում, սակայն տեղ չի գտել հետագայում համացանցում ամրագրված՝ հաղորդման տեսագրությունում:

3. Ըստ դիմումատուի՝ ռեպորտաժում հնչում են վիրավորական արտահայտություններ, բռնության կոչեր և ատելության խոսք: Մասնավորապես, հանձնաժողովը ԴՄ-ի ուշադրությունն է հրավիրում ասուլիսների մասնակիցներ՝ ազատամարտիկ Շահե Աճեմյանի և գնդապետ Սայաթ Շիրինյանի արտահայտություններին, որոնք ռեպորտաժը պատրաստած լրագրողը ներկայացրել է ուղիղ խոսքով:

4. 2021թ. դեկտեմբերի 14-ին ԴՄ-ն դիմել է հեռուստաընկերությանը՝ տեղեկացնելով բողոքի մասին:

5. 2021թ. դեկտեմբերի 17-ին և 2022 թ. փետրվարի 2-ին ԴՄ-ն նախաձեռնել է դիմումի քննարկումը առցանց ձևաչափով:

6. 2022թ. փետրվարի 2-ի առցանց նիստում հեռուստաընկերության դիրքորոշումը ներկայացրեց «Հայկական երկրորդ հեռուստաալիքի» փոխտնօրեն Լևոն Սուլթանյանը: Նա, մասնավորապես, ռեպորտաժում հեռարձակված արտահայտությունները մեկնաբանեց իբրև կարծիքների ազատ տարածման սկզբունքի իրականացում, նշեց, որ այդ արտահայտություններում կոնկրետ անձանց հասցեին ատելության խոսք կամ բռնության կոչ իրենք չեն տեսնում, և որ, ըստ միջազգայնորեն ընդունված նորմերի, պաշտոնյաներին հասցեագրված խոսքի պաշտպանվածության շեմն ավելի բարձր է, հետևաբար, նրանց հասցեին կարող են հնչել նաև կոշտ քննադատություններ:

Բ. ԷԹԻԿԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ

I. Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագիր

1.4. Հստակ սահմանազատել փաստերի և տեղեկությունների շարադրանքը՝ կարծիքներից, վերլուծություններից և մեկնաբանություններից:

1.5. Վերլուծություններ և մեկնաբանություններ կատարելիս հիմնվել ստույգ փաստերի և հավաստի տեղեկությունների վրա:

4.2. Այն դեպքում, երբ խոսքի ազատությունը հակասության մեջ է մտնում մարդու մյուս հիմնարար իրավունքների հետ, լրատվամիջոցն ինքնուրույն է վճռում, թե ինչին տալ նախապատվությունը, և պատասխանատվություն է կրում իր վճռի համար:

5.1. Խուսափել մարդկանց հանդեպ նախապաշարված վերաբերմունքից՝ նրանց ցեղային, սեռային, տարիքային, կրոնական, ազգային, աշխարհագրական պատկանելության, սեռական կողմնորոշման, ֆիզիկական արատների, արտաքինի կամ սոցիալական կարգավիճակի պատճառով:

5.2. Որևէ ձևով չքարոզել ազգային, կրոնական թշնամանք և անհանդուրժողականություն, քաղաքական, սոցիալական, սեռական և լեզվական հայտանիշներով խտրականություն, բացառել ատելության խոսքը:

5.3. Որևէ ձևով չքարոզել պոռնոգրաֆիա, բռնություն, պատերազմ, ցեղասպանության և մարդկության դեմ կատարված հանցագործությունների հերքում:

II. ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի աշխատակարգ

4.7. Տեսալսողական մեդիա ծառայություններ մատուցողների գործունեությանը վերաբերող էթիկական խնդիրների առնչությամբ պատշաճ դիմող է ճանաչվում Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը («Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքի իմաստով)՝ որպես ոլորտը կարգավորող պետական մարմին, որը լիազորված է նաև հետևելու այդ ԶԼՄ-ների՝ մասնագիտական էթիկայի նորմերի պահպանմանը: ՀՌՀ-ից ստացված դիմումները քննվում են գործող ընթացակարգով, ինչի արդյունքում, եթե վեճը վերաբերում է Կանոնագիրը ստորագրած հեռուստաընկերությանը կամ ռադիոընկերությանը, ԴՄ-ն տրամադրում է եզրակացություն, իսկ մյուս դեպքերում՝ փորձագիտական կարծիք, կամ հանդես է գալիս հայտարարությամբ:

Գ. ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄՆԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը՝

գնահատելով, որ

- Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը շարունակում է ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի դիրքորոշումը ստանալու ակնկալիքով նպաստել երկրում լրատվամիջոցների ինքնակարգավորման նախաձեռնության կարևորմանն ու ամրապնդմանը,

կրկին ընդգծելով, որ

- ատելության խոսքը տարածվում է այն գեներացնելու միջոցով.

երբ հնչած առաջին նման խոսքին հասարակությունը չի հակազդում, հետևում է կրկնությունների միջոցով դրա հետագա տարածումը՝ ավելի ու ավելի ահագնացող բնույթ կրելով, միևնույն ժամանակ արձանագրելով, որ Յություբում տեղադրած տվյալ նյութի բովանդակությունը այս դեպքում լայն տարածում չի ստացել,

նկատի առնելով, որ

- ասուլիսները ուղիղ եթերով չէին հեռարձակվում, և դրանց մասին ռեպորտաժ պատրաստելիս հեռուստաընկերությունը կարող էր խուսափել արտաքուստ վիրավորանք, ատելության խոսք, բռնության կոչեր պարունակող արտահայտությունները ռեպորտաժում ներառելուց,

չցանկանալով

- տիրաժավորել հնչած վիրավորական արտահայտությունները, սակայն ընդգծելով հատկապես բռնության հակում և դրդում ու ատելության խոսք պարունակող «մի օր *ժողովուրդը կարա դատաստան տեսնի իրա հետ, ժողովրդի ձեռքը անցնի իրեն բզիկ-բզիկ են անելու*», «*մարդիկ կան՝ ուզում են իրեն հում-հում ուտել*», «*ժողովրդի ցանկությունն է տեսնել իրեն կախաղան, բանտ, դատարան*»: «*Մուսոլինիի նման ոտից են կախելու ներքև*» արտահայտությունները,

արձանագրում է՝

- Կարծիքների ազատ արտահայտումը բացարձակ իրավունք չէ և կարող է սահմանափակվել, մասնավորապես, այլոց իրավունքների և ազատությունների, պատվի ու բարի համբավի, հասարակական անդորրի պաշտպանության նպատակներով, իսկ գնահատող դատողությունները չպետք է հանգեն վիրավորանքի և ատելության խոսքի:

- Եթե մարդը հրապարակային արտահայտություններ է անում, ապա դրա պատասխանատուն միայն ինքն է, սակայն երբ լրատվամիջոցը, հնարավորություն ունենալով խուսափելու այդ արտահայտությունները բառացի հեռարձակելուց, չի վարվում այդպես, ապա դառնում է համապատասխանատու:

- Տվյալ ռեպորտաժը պատրաստելիս լրագրողն ինքն էր ընտրում դրանում տեղ գտնելիք արտահայտությունները և կարող էր խուսափել ծայրահեղ արտահայտությունները ներառելուց՝ միևնույն ժամանակ տալով ասվածի հիմնական բովանդակությունը և ասուլիսի մասնակիցների կարծիքներն ու դիրքորոշումները: Այսինքն, և՛ լրագրողը, և՛

հեռուստաընկերության խմբագրությունը հնարավորություն ունեին ռեպորտաժի համար ընդունելի միջամտությամբ խուսափել առերևույթ ատելություն և բռնության կոչեր պարունակող խոսքից:

- Չմիջամտելով և ուղիղ խոսքով հեռարձակելով ծայրահեղ արտահայտությունները՝ ռեպորտաժի հեղինակը և հեռուստաընկերությունը նախապատվությունը տվել են ասուլիսների մասնակիցների կարծիքների, դիրքորոշումների տարածման այնպիսի եղանակին, որը, հաշվի առնելով Հայաստանի հանրային դաշտում ձևավորված անհանդուրժողականության, ագրեսիվության մթնոլորտը, կարող է գնահատվել որպես խոսքի ազատությունը չարաշահող և մարդու այլ հիմնարար իրավունքների հետ հակասության մեջ մտնող: Հետևաբար, համաձայն Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագրի 4.2 կետի՝ հեռուստաընկերությունը պատասխանատու է իր այդ նախապատվության համար:

- Ո՛չ այդ ռեպորտաժում, ո՛չ էլ օրվա լրահոսում հեռուստաընկերությունը տեղ չի հատկացրել հնչած կարծիքներին և արտահայտություններին հակադիր տեսակետներին, ինչը կարող էր որոշակիորեն հավասարակշռել և չեզոքացնել ռեպորտաժի հնարավոր բացասական ընկալումը:

- Ռեպորտաժում հնչած արտահայտությունները Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագրի 5.2. և 5.3. կետերի խախտում են:

ԴՄ-ն կոչ է անում՝

- հատկապես հեռարձակվող լրատվամիջոցներին՝ հաշվի առնել երկրի ընդհանուր լարված մթնոլորտը և հնարավորինս բացառել ատելության խոսքի, բռնության կոչերի տարածումը,

- Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովին՝ հետևողական լինել հեղինակազորված մյուս հեռարձակողների եթերում ևս էթիկական նորմերի խախտումների հայտնաբերման, դրանք մասնագիտական քննարկման նյութ դարձնելու հարցում:

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը հիշեցնում է՝

Կանոնագիրը ստորագրած լրատվամիջոցների ներկայացուցիչները, ընդունելով իրենց իսկ կողմից ընտրված Դիտորդ մարմնի իրավասությունը՝ քննելու իրենց գործողությունների ու հրապարակումների համապատասխանությունը Կանոնագրի դրույթներին, պատրաստակամություն են հայտնել՝ ԴՄ-ի որոշումը

հրապարակելու իրենց լրատվամիջոցներում:

Ընդունվել է 2022թ. փետրվարի 2-ին,

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի հետևյալ կազմով՝

Դավիթ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ, «Մեդիամաքս» լրատվական գործակալության գլխավոր խմբագիր

Նարինե ԱՎԵՏԻՍՅԱՆ, Վանաձորի «Լոռի» հեռուստաընկերության գործադիր տնօրեն

Կարինե ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Գյումրիի «ԳԱԼԱ» հեռուստաընկերության գործադիր տնօրեն

Մեսրոպ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, մամուլի փորձագետ

Արա ՂԱԶԱՐՅԱՆ, իրավաբան

Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի նախագահ

Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ, «Արմենիա» հեռուստաընկերության օմբուդսման

Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ, Երևանի մամուլի ակումբի նախագահ

Անժելա ՍՏԵՓԱՆՅԱՆ, Արմավիրի «Ալտ» հեռուստաընկերության խմբագիր

Գեղամ ՎԱՐԴԱՆՅԱՆ, Media.am-ի պրոդյուսեր

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը ձևավորվել է ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների կողմից, որոնք այս պահին թվով 69-ն են: ԴՄ-ն իր եզրակացություններում ղեկավարվում է Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների Կանոնագրով, որն ընդունվել է 2007 թվականի մարտի 10-ին, վերախմբագրվել՝ ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների 2015 թվականի մայիսի 16-ի ընդհանուր ժողովում: